Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվել է Կենտրոնական (ազգային) բանկերի աուդիտորական գործունեության խորհրդատվական խորհրդի 14-րդ նիստը

18.09.2026

2026 թվականի սեպտեմբերի 8-12-ը ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվել է Կենտրոնական (ազգային) բանկերի աուդիտորական գործունեության խորհրդատվական խորհրդի 14-րդ նիստը:

Նիստը համախմբել է Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի կենտրոնական (ազգային) բանկերի, ինչպես նաև ֆինանսական ոլորտը կարգավորող մարմինների ներկայացուցիչների՝ ներքին աուդիտի ոլորտում փորձի փոխանակման, արդի զարգացումների և մարտահրավերների քննարկման նպատակով: